

MODERN ARMENIAN

(Maximum Marks : 80)

(Time allowed: Three hours)

(Candidates are allowed additional 15 minutes for *only* reading the paper.

They must NOT start writing during this time.)

Answer *all* questions.

The intended marks for questions or parts of questions are given in brackets [].

Question 1

[20]

Write a short composition in Modern Armenian of about 400 words on **any one** of the following topics:

Գրել շարադրություն տրված թեմաներից մեկով (400 բառի սահմաններում):

- (i) Դարերի երկիր Հայաստան
- (ii) Նամակ հեռավոր ընկերոջ
- (iii) Բարեկամություն
- (iv) Բնության հրաշքները

Question 2

[20]

Translate the following passage into English:

Տրված տեքստը հայերենից թարգմանել անգլերեն:

Սուտը

Իրանի հզոր շահը, որ հաղթանակած վերադարձել էր արյունահեղ ճակատամարտից, հրամայեց իր մոտ բերել բոլոր գերիներին, որոնց շղթայակապ նետել էին մութ գնդանը:

Երբ տանջված գերիները՝ վախեցած ու սարսափած, շարվեցին կողք կողքի, շահը խիստ կեցվածքով հարցրեց, թե ինչու էին ելել իր դեմ կովի. մի թե չգիտեին՝ շահն անպարտ է: Որքան էլ դաժան էր շահի տեսքը, գերիներից մեկը՝ նիհար դեմքով, հազիվ լսելի ձայնով, իր մայրենի լեզվով անպատվեց նրան՝ անվանելով բռնակալ: Շահը, որ չգիտեր թշնամու լեզուն, հրամայեց թարգմանչին թարգմանել ասվածը: Եվ նա, չգիտես գերուն խղճալով, թե

շահին չվիրավորելու համար, ստեղձ ստելով, թե գերին օրհնեց ու փառաբանեց հզոր շահին:

Շահի հրամանատարներից մեկը, որը բոլորովին չէր սիրում թարգմանչին ու վաղուց թշնամի էր նրան, օգտվելով առիթից՝ մատնեց ասված սուտը:

Գահին նստած շահը մի պահ այլայլվեց, ապա կտրուկ դարձավ մատնիչը.

-Գուցե դու իրավացի ես: Բայց նրա սուտն ավելի թանկ է, քան քո

ճշմարտությունը: Նրա ստից ես ավելի լավ գգացի, իսկ քո ճշմարտությունից մի նոր թշնամություն արթնացավ իմ մեջ:

Question 3

Read the passage given below carefully and answer in Modern Armenian the questions that follow:

Կարդալ տրված տեքստը և կատարել ներքոնշյալ առաջադրանքները.

Մեզանից շատ տարիներ առաջ տիեզերքի տերը՝ Աստված, ստեղծեց երկիրը, կենդանիներին, մարդկանց: Միակ բանական էակը մարդն էր, որին Արարիչն ստեղծեց իր պատկերով: Նա ուզում էր, որ բանական էակը լինի կատարյալ: Բայց, ավաղ, մարդը չարդարացրեց Տիրոջ ակնկալիքները: Նա ամբարիշտ ու **ապերախտ** էր:

Օրեցօր ավելի ու ավելի էր **աղտոտվում** մարդու հոգին: Նա հղանում էր չար խորհուրդներ, վատ արարքներ:

Տեսավ այդ բոլորը Արարիչը և **գոջաց**, որ ստեղծել է մարդուն: Որոշեց ջնջել աղամորդուն դրախտային երկրի երեսից:

Այդ ժամանակ մեղսալի աշխարհում մի արդար մարդ էր ապրում՝ Նոյ անունով: Նա մի օր հայտնվեց Նոյին և ասաց.

-Նոյ, քեզ համար խեժոտ փայտից մի տապան սարքի՛ր, ներսից ու դրսից ծեփի՛ր կուպրով: Կվերցնես գերդաստանդ՝ կնոջդ, որդիներիդ, հարսներիդ: Տապանում կտեղավորես թռչուններից ու կենդանիներից զույգ-զույգ՝ եզ ու արու: Յոթ օր հետո ջրհեղեղ է լինելու երկրի վրա:

Նոյը անմիջապես գործի անցավ: Վարվեց այնպես, ինչպես **պատգամել** էր Արարիչը:

Սկսվեց քառասունօրյա ջրհեղեղը: Թափվում էր հորդառատ անձրևը, աղբյուրներից բխում էր արագահոս ջուրը:

Մարդիկ սկզբում ոչինչ չէին հասկանում, կարծում էին՝ սովորական տարերք է: Բայց հանկարծ **կրահեցին**, որ Աստծո զայրույթն է պոթկացել: Աղոթքներ էին մրմնջում՝ ձեռքերը երկինք կարկառած: Զոջում էին իրենց մեղքերը, ապաշխարում: Բայց ամեն ինչ անօգուտ էր, Տերն անողոք էր:

Միայն Նոյի տապանն էր, որ բարձրացել էր ջրերի վրա և լողում էր հանգիստ ու անվտանգ:

Մի պարզկա օր վաղորդյան արեգակի ոսկյա շողերի տակ Նոյր նշմարեց մի կայծկլտուն ձյունաշերտ . դա Արարատի կատարն էր: Այդտեղ էլ հանգրվանեց Նոյր: Հարյուր հիսուն օր տապանը մնաց լեռան գագաթին, մինչև ջրերը ցամաքեցին:

Դարձյալ հայտնվեց Աստված և թույլ տվեց, որ Նոյը դուրս գա տապանից և նորից աշխարհ մտնի:

-Աճեց՛ք և բազմացե՛ք, - ասաց Տերը: - Ես ուխտ եմ հաստատում իմ և ձեր միջև: Այդ ուխտի նշանը թող լինի աղեղը՝ ծիածանը, որ կապում է երկինքն ու երկիրը:

Կատարվեց Աստծո կամքը, իսկ Արարատ լեռը դասվեց աշխարհի սրբությունների շարքում:

- (i) Ի՞նչ գիտես Արարատ լեռան մասին: [5]
- (ii) Ինչո՞ւ Աստված բարկացավ մարդկության վրա: [5]
- (iii) Ո՞վ էր Աստծո ընտրյալը և ինչո՞ւ ընտրեց նրան: [5]
- (iv) Գրել ընդգծված բառերի հոմանիշները: [5]

Question 4

- (a) Translate the following passage into English: [10]

Տրված տեքստը հայերենից թարգմանել անգլերեն:

Հացի ուժը

Հանճարեղ բանաստղծ Ավետիք Իսահակյանը ամեն անգամ երբ Հայաստանից դուրս էր գտնվում, անմիջապես զգում էր հայրենի պաղ աղբյուրների, հասուն արտերի ու տաք հացի բույրի կարոտը:

Մի անգամ Ժնև քաղաքում բանաստեղծը կարոտից սկսում է արտասվել: Նրան թվում է՝ ուր որ է կարոտից կմեռնի: Հանկարծ մտաբերում է այդտեղ ապրող ֆրանսախոս մի հայուհու, որը վաղուց մոռացել էր թե՛ հայերենը, թե՛ իր հայ լինելը: Մի տոպրակ այլուր վերցրած՝ բանաստեղծը շտապում է տիկնոջ մոտ՝ խնդրանքով, որ հաց թխի: Կինը, որին զարմացնում է բանաստեղծի տարօրինակ թվացող անհասկանալի ցանկությունը, տեսնելով իրեն ուղղված հայացքը, համաձայնվում է կատարել նրա կամքը: Երախտագիտությանը համբուրելով տիկնոջ ձեռքերը՝ բանաստեղծը վերցնում է հացն ու դուրս գալիս: Տունդարձի ճանապարհին նրան թվում էր՝ ինքն արդեն Հայաստանում է: Հասնելով իր բնակարանը, որ մի համեստ կացարան էր, բանաստեղծը մեծագույն հաճույքով ուտում է հացը, ու նրա հոգին՝ կարոտից աստիճանաբար խաղաղվում է:

Իմանալով, թե մեծ բանաստեղծն ինչու է իրեն երկու ժամով հացթուխ դարձրել, կինը հուզվում է, ոգևորվում և որոշում հայերեն սովորել:

Անցնում են տարիներ . . .

Մի օր Երևանի մարդաշատ փողոցներից մեկում բանաստեղծը
անսպասելի հանդիպում է այն կնոջը: Այ քեզ հրաշք. կինը խոսում էր
մաքուր հայերենով: Տեսնելով մեծ բանաստեղծի՝ իր վրա ուղղված
հայացքը՝ կինը, ուրախ ժպիտը դեմքին, փաթաթվում է նրան ու սառում.
- Միրելի՛ վարպետ, ինձ հայերեն սովորեցրեց այն հացը, որ ես թխեցի
այնտեղ՝ ժնևում:

(b) Translate the following passage into Modern Armenian:

[10]

Տրված տեքստը անգլերենից թարգմանել հայերեն:

India

India is a beautiful country which is known for its different culture and tradition. It is famous for its historical heritage and monuments. The citizens here are very humble and very friendly. Under British rule, it was a slave country before 1947. However, due to the struggle and dedication of our great freedom fighters, India got independence from British in 1947. When India got independence, Pandit Jawaharlal Nehru became the first Prime Minister of India and hoisted the Indian flag and said, "When the world sleeps, India will wake to life and freedom".

India is a vast country with second largest population and seventh largest land area in the world. The population is more than 1.2 billion. There are 29 states mainly on the basis of linguistic lines.

India is a democratic country where the people have the right to make decisions for the betterment of the country. India is famous for this statement "Unity in diversity" because people of different castes, religions, cultures and tradition live together in unity. India is a tourists' paradise. There are countless of tourist attractions, such as palaces, forts, tombs, churches, temples, minarets, nature attractions, etc. The Taj Mahal is one of the world's most famous historical buildings. The Caves of Ajanta and Ellora are a brilliant specimen of architectural and artistic excellence. There are numerous centres of pilgrimage for religious tourists. Millions of people visit India every year.